

Այս վերջին մէկ քանի տարուանս մէջ ամենայն զիտունք և տէրութիւնք սկսան մեծապէս փոյթ տանիլ անտառաց պահպանութեան և 'ի քնին առնուլ մոտադիր՝ անոնց ջնջուելուն հետեւանք բազմապիսի մնասները : Բայց այս հոգն ու գարմանը զժրախտաբար շատանազան սկսան : Գաղղիա իր վաղեմի անտառներէն հազիւ տաճներորդ մասն ոնի հիմա . Անդզիա որ վաթսուն և ինն անտառ ունէր , հազիւ երեք կամչորս հատ կը համրէ . Գերմանիա հազիւ թէ պէտք եղածն ունի . իսկ բրուսիա զրեթէ ամեննեին չունի : Խտալիա նուազ թշնամի եղած է իր անտառացը , բայց Զվիցցերիա դեռ ևս կաշխատի կորելու իր անտառները : Ոտսիտ ըստ մեծի մասին զուրկ է յանտառաց . Տոնի և Վորկայի մէջ եղած երկիրները զրեթէ հարթ յատակ եղած են 'ի ծառոց : Փոքր Ասիա և տեսնայ անտարբեր աշօք փճանալ եր անտառները : Հարաւային երրոպա



ՕԶԱԿԱԼ ԵՒ

կ թունաստան ամեննեին անտառ չունին :

Եթէ ուշի ուշով քննելու ըլլանք .  
A.R.A.R. @

կաստան, 'ի Շը-  
ւետ և յափոնս  
Միջերկրականի, 'ի  
Յոնական կղզիս,  
յիտալիս, 'ի Հա-  
րաւակողմն Եւրո-  
պիոյ, և ուրիշ Կող-  
մեր. և այս փո-  
փոխութեան գըլ-  
խաւոր պատճառ  
անտառաց բար-  
ձումը կը գտնանք:  
Երբեմն Միջագետ  
աշխարհիս ամե-  
նէն արդասաբեր  
երկիրն էր, մա-  
սաւանդ ծիգրիսի  
ու Եփրատայ մէջ  
եղած երկիրները,  
և յատկապէս Մի-  
ջագետք ըսուած  
աշխարհէր. և այն  
պատճառաւ Ծը-  
նընդոց գիլըն ալ  
Դրախտը Ասիոյ  
այդ կողմերը կը  
դնէ + բայց օր օ-  
րուան վրոյ այդ-  
երկիրներն անա-  
պատճանին, ան-  
մարդացան, ան-  
մակ թողուեցան  
և վայրենացան:  
ի՞նչ է արդեօք  
այսպիսի կերպա-  
րան ափ ո խու-  
թեան պատճա-  
ռու. ուր գնացին  
այնչափ արդիւ-  
նաբեր ջուրը և  
անձրեւք. ուր նաւ-  
արկելի գնետերն  
որ կը թանային  
այդբազմաբեղուն  
երկիրները: Եւ ե-  
թէ այնչափ գե-

Ludwig Beckmann



## ՄԱՐԱԳՈՒ

գպատմութիւն, կիմանանք մէկէն թէ  
ինչպիսի կլիմայի փոփոխութիւն տեղի  
ունեցած է 'ի Միջագետս, 'ի Պարս-

տերն և առուակներն օր կը բազմացնէին  
Եփրատայ ու Տիգրիսի ջուրերը՝ յամա-  
քեցան այսօր, ուր գնաց ջրոց ան մեծ

քանակին . մւր այն աղբիւրներն որ կը  
ծեացնէին զանոնք :

Կլիմային փոփոխութեան և անոր հե-  
տեանաց ուրիշ ազգութ բայց տիսուր օ-  
րինակ մ'ալ Պարսկաստան կ'ընծայէ  
մեզ, ուր քաղաքակրթութիւնն և մշա-  
կութիւնն նախնադոյն է քան զամե-  
նայն աշխարհաց Ասիր, Երրեմնկասպից  
ծովուն մօտի գաւառոք գեղեցիկ պար-  
տէզ մ'էին ազգի ազգի պոտոց . բայց  
ինչպիսի խորութիւն անցելցն և ներ-  
կային մէջ . Պարսկաստանի ներքսա-  
կողման լեռները բոլորովին ամուլ են .  
և 'ի բայ առեալ զՄալունդարան և Վը-  
րաստանի մերձաւոր կողմերը, չկայ  
անտառ ունեցող լերանց շղթայ . այն  
պիսի մեծածաւալ երկիր մը՝ ինչպէս է  
Պարսկաստան, չունի նաւարկելի գետ .  
դուն ուրեք կ'անձնեէ, երկիրն անբեր  
է, լերինք առանց կանաչութեան և  
հովիտք առանց ջրոյ :

Խակ թէ Պաղեստինու կլիմային վրայ  
ինչպիսի փոփոխութիւն եղած է, կը  
տեսնուի այս յետագայ դէմքեն : Այն  
աշխարհին մէջ ուր ցօղն ամենառատ  
էր ըստ Դաւթի և ըստ այլոց զրյաց  
Հնոյ կոտակարանին, հիմա շատ նուա-  
զած է . Հիներն կը խօսին ձեան ու  
ցրոց վրայ, որ հիմա տեղի չունին . և  
ոչ իսկ Յորդանան գեսն անցնելու հա-  
մար հրաշքի կարօտութիւն մնայ, վասն  
զի շատ ճանապարհորդք անցան վրա-  
յէն հետիոտս՝ ջրոց նուազութեան  
պատճառաւ : — Ջրոց նուազութիւնն  
անկէց ալ կ'իմացուի, որ երկիրն առևնկ  
զրեթէ չի բուսցներ, մինչդեռ Աստուած  
այդ երկիրն իսրայելի ժողովրդեան տա-  
լու առեն այն աստիճան ճառերով ու  
անտառներով ծածկուած էր, որ երկո-  
տասան ցեղերէն մին հարկեցաւ հա-  
տանել զանտառան մշակութեան եր-  
կիր բանալու համար : Ուր են հիմա  
հարաւակողմեան մենամեն անտառ-  
ներն, կարմելայ լերան ստորոտը, ո-  
րոց վրայ կը խօսի Ստրաբոն յոյն պատ-  
մագիրը :

Եզիպտոս՝ երկիր վաղեմի, որ համ-  
բաւեալ էր 'ի հողագործութեան, 'ի

զիսութեան և 'ի ճարտարութեան, ա-  
մենայստնի ապացոյց մ'է մեր առջին  
կլիմայից փոփոխելիութեան, թէ ի՞նչ էր  
հինան Եզիպտոս՝ կը վկայէ մեզ զայն  
թեքէ հարկւրագուռն, մեծագործ ա-  
պարանօք և գամբարանք, կը վկայեն  
մեծահոչակ բրդունքն և մեծագործ  
նաւարկելի ջրանցք : Ժողովուրդն՝ որ  
փարաւնեանց ժամանակ 18 միլիոնի  
կը հասնէր, նուազեցաւ մինչեւ ցեօթն  
միլիոն՝ հովովմէական տիրապետու-  
թեան ատեն, և է սցմմ երկու և կէս  
միլիոն :

Սուէզի երկայնութեամբ, Գահիրէի  
հարաւակողմէր, միոյ աւուր ճանապար-  
հաւ հեռի, ամբողջ քարացեալ անտառ  
մը կը տեսնուի : Բողոր ծառերն մի և  
նոյն ուղղութեամբ ընկած են, 'ի հիւսի-  
սոյ 'ի հարաւ, իրարու մօտ տարա-  
ծեալք 'ի գետին կանոնառապէս, 20  
կամ 30 ոսնաշափ կոնցերով, և կը տա-  
րածուի այս անտառը մէկ ժամուան  
հեռաւորութեամբ : Զհամարինք որ ծա-  
ռոց այս կերպարանափոխութիւնն՝ ե-  
ղիպտական պատճութեան թուակա-  
նէն առաջ պատահած ըլլայ, վասն զի  
նիւըն կապացուցանէ զօրաւոր փաս-  
տերով, որ սյա տեսակ քարացմունք  
յաւագի՝ կընան քիչ ժամանակի մէջ  
ալ տեղի ունենալ :

Շատ տեսակ ծառեր որ կ'աճէին 'ի  
հնութմ 'ի վերին Եզիպտոս, 'ի Նուափիա,  
ինչպէս է օրինակի աղագաւ ակասիա  
ծառը, ալ չեն աճիր . արմաւենին չի  
պաղաքերեր անդր քան զջոնկոլա, և  
ոչ իսկ որթն և ծիթենին կ'արմատա-  
նան : Ուր է կոպտասայ անոյշ դինին 'ի  
վերին Եզիպտոս . ուր Արախնոայն, Մեծ  
փիսեանն, որք կը պտղաբերէին նաև  
յաւուրս կը պատրաստրոյ : Կաղնին որ ա-  
մենառատ էր, ըստ թէոփիրաստայ, թե-  
րէի մօտերը, ալ չի դանուիր : Ժան-  
տաթզենին որ երբեմն սովորական  
տունկ մ'էր, և սրոյ փայտէն մու-  
միայից արկղներ կը շինուէին, այժմ  
հազիւ երքէք կը առնաւի :

Նոյն իսկ այժմեան Եզիպտոս կընայ  
կենդանի օրինակ մ'ըլլալ ծառոց և

բուսաց կլիմային վրայ ունեցած տղջեց ցութեանը : Ով որ տեսած է ասկէց երևուն աշաղի առաջնուան եղիքապոսը , զիսէ անտարակցոյ որ շատ քիչ կ'անձրիէր յԱլեքսանդրիա , և թէ քաղըէն դուրս բոլորսկին անտապատ էր : Խոկհիմա բոլոր քաղաքն շրջափակեալէ ՚ի պարտիզաց , յայգեստաննեաց և յանտառաց արմաւենւոյ . կ'անձրիէ առատօրէն , և կլիմայն զգալի կերպով լաւցած է :

Հինն Յունաստան ունէր անտառներ և առատ ծառեր : Առանց դիմելու Հոմերոսի և Հեսիոդեայ , որ կը խօսին հովանաւոր պորտակաց և մեծամեծ անտառաց վրայ որ կը ծածկէին զլերինս , թէսկրաստ կը յիշատակէ անոնցմէշ շատ մը մշտականաչ վիճակի մէջ : Կը խօսի սա ընդարձակ անտառաց վրայ՝ որ կը բարձրանային Պառնասոսի , Հելիկոնի և Տայգեստայ վրայ , և առաւելապէս ՚ի վերայ լերանց Արկադիոյ . ինչպիսի տարրերութիւն թէնիքրաստայ այս նկարագրութեան և այժմեան մեր կութեան մէջ : Բնական բուսաբերութեան ամբողջական բարձմամբ կիմայն կ'այլայի , մասնաւորապէս մըլինոյրտական խոնաւութեաննկատմամբ Ռմանք ՚ի տնկոց կը գաղթին , այլք կը կորրնչին , և բազումք խնդրեն զլերինս .

Ո՞վ չի զիտեր Փաքր Ասիոյ անտառնելի յամապութիւնը . բայց հիմս հարաւային արեելեան քամին աւելի կիզանող է անցնելով Ասորեստանի և հիւսիսային Արքիեկոյ մերկ գաշտաց վրայէն , երկիրք բոլորսկին անջուրք և անձառք . Քիչ անգամ կը աեսնուի ամել . քամին կիզիչ ու ցամսվեցուցիչ է , անցնելով անսուսեր լերանց կատարներէն , ծածկեալք ցամաքեալ հողակոշաներով . և չի գտներ ճամբուն վրայ ոչ աղբիւր . ոչ գետ և ոչ լիճ , յինքն ընդունելու անոնց խոնաւութիւնը . անոր համար եթէ ծով չըլլար ընդ մէջ , քիչ տարրերութիւն պիտի գըտնայինք Արքիեկէի և Յունաստանի ու դոց մէջ :

Գալով իսալիոյ , թէպէտ կընայ

պարծիլ իր երկրադրութեան արուեստին յառաջնորդիմութեան վրայ , բայց ոչ և անտառաց հոգատարութեան . վասն զի և ինքն իսկ ուրիշ աշխարհաց օրինակին հետևելով , հետամուտ է ննջել անտառները , պատճառատարով իր նախիին կլիմային փոփոխութեանը . Եթէ ննովին քայլի յառաջներուըլայ , ամեննին չխռովի եթէ տեսնայ քիչ ատենէն գետերը սառած , և կորուսած ջերմ աշխարհաց սեփական տունկերը . որ կ'ածէին բայի ու Տիբերի եղերաց վրայ :

Բայց առ այժմ թողով զապադային քննենք զներկայն : Ճամն և ութ դարսուց միջոցի մէջ իսալիոյ կլիմային վրայ եղած փոփոխութիւնն շատ զդալի է : Թէպէտ Ապենինեան լերանց շղթայքն ծածկուած են անտառներով , սակայն ուրիշ կողմեր հազիւ թէ կը տեսնուի անտառ , և հետեւաբար այրելի փայտն ու ածուխը նուազելու վրայ են օր քան զօր : Կ'ըսէր երբեմն Ռիբատիս . « Ի՞նչ պէս սպիտակագոյն կը փոյլէ Սորադդէ բարձրագէկ ձեռամբ , որուն հազիւթէ ծառք կարող են տանել ծանրութիւնը . ինչպէս զարձեալ սասատիկ ցըրտէն սառելով կ'արդիլուի գետոց ընթացքն » :

Պինիոս կը պատմէ թէ Հուենոսի ափանց վրայ կը սառէին աշնանային սերմանք : Տիբերիս գետոյն եղերաց ցուրտն հաւասար էր այսօրուան Սենայի եղերաց ցրտոյն , և Բոյի ափունքը համեմատ էր կասովից ծովուն ափանց : Խոտը յուիս ամսոյն մէջ կը քաղէին , մինչդեռ հիմա յունիս ամսոյն մէջ կը քաղեն : Ի՞նչ բանի ընծայելու է այս տարրերութիւնը , կամ ի՞նչ է արդեօք կլիմայի այս ասամիճան փոփոխութեան պատճառն : Թողունք որ այս հարցման չումպալու պատասխանէ . « Աւազուտ երկիր մը , կ'ըսէ նա , եթէ մերկանայ իր անտառներէն , կ'աւելնայ բարեխառնութեան ասամիճանը , վասն զի նոյն իսկ երկիրն բնութիւնը կը կանոնաւորէ միմնարտին աղդեցութիւնները : Տունկերով և մանաւանդ անտառնե-

բազմուած երկիրք՝ կը պահէն խո-  
նուութիւնը, նուազ կը չերմանան ՚ի  
ճառագոյթից արեգական, աւելի կա-  
կուլ կ'ըլլան և կը սփռեն զովացուցիչ  
ու բարեշուն օդ մը : Ընդհանրապէս  
երբոր բարեխառնութիւնն և զանազան  
ձգիչ զօրութիւնք կը փոխուին երկրա-  
գնատոյ մտկերիսութին վրայ, կ'այլայի  
յայնժամ նաև մձնողորտին շագեսոց  
բաժանումը : Օդոյ զովութեան պատ-  
ճառ երկիրն ազգեցութիւնք՝ ստուեր,  
արտաշնչութիւն և բազմութիւնք ան-  
տառաց, երկը դիսաւոր տարերք են  
երկրի մը կիմապին բնութեան ։

Որովհետեւ մինողը բայցին խոնաւութիւնն անհրաժեշտ կ առնորդ է բուսական մարմուց պահպանութեան , հետեւ արարք գործարանք բուսոց և առաւելապիս տերեք , կը զգան մինողը բայց յին շոգեաց պակասութեան ազգեցութիւնը : Ասով բոյսերն կը կորուսանեն իրենց սկզբնական ձեր , և կը ստանան ուրիշ ձեւ բատ կլիմային փոփոխութեան . անոր համար շատ գժուարին է , կ'ըսէ չումպուտ , թէոփրաստայ նկարագրած տունկերը ճանինալ , նոյն իսկ հօն՝ ուր էին իրեն ժամանակ : Այսպիսէ բուսական կենաց յնչման պատճառաւ , որ գլխաւոր ազդիչ է կլիմայից փոփոխութեան , յառաջ եկան ազդի ազնազանութիւնք :

Եւ քանզի անհերքելի ճշմարտութիւն  
է՝ որ ծառերը ու տունկերը մէկ կող-  
մանէ կը ծծեն մմջնողրտային շոգին  
ու խոնաւութիւնը, և միւս կողմանէ  
կ'արտաշչեն անզգալի կերպով զթըլթ-  
ուածին, կը հետեւ որ այսպիսի զոր-  
ծողութիւն մը տնկոյն մահուամբը կը  
լըննայ: Ասով գետերն, առուակներն  
և լիճերն՝ որ այնքան ձեռնտու կ'ըլլա-  
յին յագեցնելու զմիջնողրտ և ամպ  
ձևացնելու, կը նուազին ու կը կորնչին  
անկոց բարձմամբ. և այն սակաւա-  
ջուր բայց պարբերական անձրկը որ  
առաջուց կը զովացնէին զբութիւն, և  
էին ստոյգ մնընդարարք բուսոյ՝ կը  
գագրին:

Քամին մերկ երկրի վրայի էն անցնե-

լով տարգյած, և չգտնելով արդեկլ՚ի ծառ  
ոց և յանտառաց, աւելի սաստկու-  
թեամբ կը փշէ, ջլատելով զմորգ և  
զանտառն. Մերկ ու ջերմ երկիրը կը  
հալածէ երկնից երեսը այէկիծեալ ամ-  
պերը և կ՚արգերու զանձրե:

իսկ երբ մժնողութն խոնաւութեամբ  
լցուի, մինչև չկարենալ տանել առկա-  
խեալ ջրոց քանիակը, կը բանայ յայն-  
ժամ իր սահմանքները, թափելով յեր-  
կիր առատ անձրեւ: Ասոր հետեանքն  
ինչ կ'ըլլայ . այս հեղեղասաստ ան-  
ձրեայ պատճառաւ կը վերանան գետք  
ի մեծ բարձրութիւն, գուրու կը զեղա-  
նին և կ'ողոզին յաճախ ընդարձակ  
տարածութեամբ երկիրներ, քշելով  
ճամբուն վրայ պատահածը: Եւ երբեմն  
յետ այնչափ մեծամեծ ու անդարձա-  
նելի վասուց, ջուրն՝ որ կը ծածկեր  
գետինը քանի մ'ոտք բարձրութեամբ,  
կը մնայ հօն ճացեալ, ապականելով  
զմթնողութ, և երբեմն բոլորովին շո-  
գիանալու համար երկար ժամանակի  
կը կարօսի:

Բաց ասկէց՝ անձրիէ պյտղառեալ  
այս հեղիղներն, ընդհանրապէս լե-  
բանց, ըլլոց և զառ՝ ի թափից վրայէն  
կը քըւն կը տանին միատեղ բուսական  
հողը, մեղլով մինչև՝ ի ծով կամ՝ ի լիճ,  
և կը թողուն միայն մերկ ու ցամաք  
ժայռերը, անկարողը լինչ և է ազգ-  
բուսարերութեան : Եւ այս կերպով կը  
կորսուին մարդագետինք և արօտատե-  
ղիք, և կը պակասին համեմատաբար  
զանդեայս և զկենդանիս մնուցոնելու  
միջոցները :

Ուստի կիմայից փոփոխութեան և  
այս ամենայն ցաւալի վասառոց պատ-  
ճառն անտառաց չնշումն է . բոյց չա-  
րիքն աւելի ևս սասակացնունը այն է , որ  
լերանց վրոյի անտառներն անդամ մը  
փճանաշնէն ետքը , ալ չե՞ն ածիր ոչ ՚ի  
ձեռն որուեսաի և ոչ զօրութեամբ  
բնութեան . զամն զի անտառին հետ  
կը վճանայ նաև բուսական հողն . քա-  
րաժայռք մերկ կը մնան , և կ'ըլլան նը-  
շաւակ հողմոց ու ջրոց բռնութեան . ո-  
րով կամաց կամաց կը կորուսանեն նաև

այն սակաւ մի հողը, որ կը նային դուցէ արմատանալ քանի մի բռուսակը :

Կվիմային փոփոխութիւնն և բռուսոց պայշտութիւնն ազգեցութիւն ունին նաև մարդոյ նիւթականին ու բարդոյականին վրայ : Ազգուցուցնելու համար թէ ինչպէս կ'ըլլոյ որ կվիմայն ազգեցութիւն կ'ունենայ մարդոյ բնականին ու բարդոյականին վրայ, ուրիշ բան պէտք չէ ընել՝ բայց եթէ ՚ի բաղդատութիւն առնուլ անտառախիտ լերանց և ծառերով գարդարուած աշխարհաց բնակիչքը՝ անծառ գաշաավայրաց բնակչաց հետ : Առաջինք զօրաւոր են մարմնով, զուարիթք ու արիասիրտք . իսկ միւսերն հազիւ թէ կ'աշխատին և մէկէն կը

յոդինին . ասոնց ոչ երակացը մէջ ոյժ կայ, և ոչ սրտերնուն մէջ արութիւն : կվիմային փոփոխութիւնը ոչ միայն կ'այլայլէ զաւնկի այլ և զիենդանինի : ուստի կվիմային փոփոխութեան հետ փոխութը է և մարդկան սնունդն : Մային կերակրոց տեղ, որ յարմարաւորն է մարդոյ, պէտք է փոխանակէ ուրիշ աեսակ կերակուր մը :

Եւ որովհեաւ, ըսինք, անտառաց բարձումն կը փոխէ զիլիմայն և զրուր բնութիւն, մինչև նոյն իսկ մարդկային կազմութիւնը, հարկ է որ պաշաննեսոյք տէրութեանց և բնապատումք գարճը նեն իրենց ուշը այս վիասոց զէմ, ջանալով անոր առաջն առնուլ :

## ՍԱՌՆԱՏՈՒՆՔ

Երկրաբանք ու աշխարհագէտք սառնատուն ըսելով կ'իմանան այն ահազին սառուցից զանգուածը՝ որ կը գտնուի լերանց գօտեաց խոր ու ընդարձակ ձորոց մէջ, և մանաւանդ բեեւոին մօտ երկիրները : Այս անսակ սառնատունք բազմաթիւք են, անանկ որ միայն վլակեան լերանց մէջ գրեթէ վեցհարիւրի շափ սառնատունք կը հաշուին, յօրս կաց մէկ մը՝ որ իր ընդարձակութեանը համար ծով վատոցից կը կոչուի, 1200 մեղր երկայնութեամբ : Բայց սառնցմէ աւելի նշանաւորք են Հիմալայեաց լերանց սառնատունքն, որոց մէջ 103 մեդրէն սկսեալ մինչև 5800 մեղր երկայնութիւն ունեցողն կայ :

Հիմալայեայ, կովկասային լերանց, Աւալեանց և Պիրենեանց մէջ գտնուած սառնատանց ընդարձակութիւնն ու մեծութիւնն համեմատական է գօտեաց ու ձորոց բարձրութեան . բայց աւելի բեեւիլի են հիւսիսային կողմերն եղած սառնատունք իրենց բարձրութեամբ, իսկ խոնաւ կվիմայից տակ քիչ սառնատունք կը գտնուին : Սկանաինաւիոյ ամեն կողմերը թէպէտ բարձր չեն, բայց ընդհանրապէս շատ սառնատունքներ, որոնք կ'իջնան մինչեւ ստորին նորվեկոյ կողմերը : Լուսալին, որ Յ աս-

տիման լայնութեան տակ կ'ընկնայ, 9000 մեղր երկայնութիւն և 800 մեղր լայնութիւն ունի, և ծովուն երեսէն 380 մեղր բարձր է : Խուանափոյ հիւսիսային կողմանց սառնատունքն գրեթէ Սառուցեալ Ովկիանոսի կը հաւասարին : Եթիցաբերի ձորերն ամենքն ալ սառնարաններով լի են, որոնք ոչ միայն ծովելերը կ'իջնան, այլ և ալեաց վրայ խաղաղով 1800 մեղր երկայնութեամբ ահազին մարտկոցներ կը ձևացնեն : Կը վաղրիմի շերմ ծուրերն կու գան կը հայեցը նեն այդ սառուցէ լերանց խարիսխները . և այն պատճառաւ մեծահատոր կտորներ փրփելով անոնցմէ ծով կ'իջնան, և ծովուն ընթացքն ալ առաջ մղելով զիրենք, մեծամեծ նաւաց խորսակիման պատճառ կ'ըլլան Ալուանդականին մէջ :

Գեհրենկայ նեղուցին հիւսիսային արեմատեան զին, Սեեման՝ Հերալտի բնայոցն 1830ին սառնատան մը գտաւ մասնաւոր մատգրութեան արժանաւոր : Այս նոր սառնատան վերջն ծայրին վրայ մէկ քանի անգիտացի նաւասամիք յանկարծակի կաւէ մեծ զանգուած մը կը տեսնան 7 մեղր թանձրութեամբ, որ ուղակի սառուցին վրայ կը հանգչէր, և վրան կարդ մը կիզահող տարածուած էր, և շատ մ'ալ խոսէ թուփեր բուսած : Պ. Սեեման այս